ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.11.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/78

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Պարանյանի (պետական ռեգիստրի գրանցման վկայական թիվ 273.110.972768),

քննելով «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար շինանյութի և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/110» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի կողմից 19.10.2021թ. ներկայացված (20.10.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/78 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1.<u>«Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 19.10.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ- Ի կարիքների համար՝ շինանյութի և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/110» ծածկագրտվ գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ հայտերի բացումը տեղի է ունենալու 20.10.2021թ., ժամը 09:30:

«ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/110» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 11-22, 40-59 չափաբաժիններով նախատեսված ապրանքների համար սահմանվել են հետևյալ պահանջները.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը
11	31321251/522	հաղորդալար		հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 2x6 քառ. մմ, զույգից մեկը պետք է գծանշված լինի կարմիր գույնով
12	31321251/523	հաղորդալար		հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 2x4 քառ. մմ, զույգից մեկը պետք է գծանշված լինի կարմիր գույնով
13	31321251/524	հաղորդալար		հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 2x2,5 քառ. մմ, զույգից մեկը պետք է գծանշված լինի կարմիր գույնով
14	31321251/525	հաղորդալար		հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 2x1,5 քառ. մմ, զույգից մեկը պետք է գծանշված լինի կարմիր գույնով
15	31321251/526	հաղորդալար		հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 1x6 քառ. մմ, դեղին-կանաչ գծանշումով
16	31321251/527	հաղորդալար		հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 1x4 քառ. մմ, դեղին-կանաչ գծանշումով
17	31321251/529	հաղորդալար		հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 1x1,5 քառ. մմ, դեղին-կանաչ գծանշումով
18	31321251/530	հաղորդալար		հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 1x2,5 քառ. մմ, դեղին-կանաչ գծանշումով
19	31331192/502	մալուխ		պղնձե մալուխ ВВГ, երկակի իզոլացված, հակակոռոզիոն փոշով լցված, 5*16 քառ. մմ
20	31331192/503	մալուխ		պղնձե մալուխ ВВГ, երկակի իզոլացված, հակակոռոզիոն փոշով լցված, 5*10 քառ. մմ
21	31331194/501	մալուխ		պղնձե մալուխ ВВГ, երկակի իզոլացված, 5*6 քառ. մմ
22	31331194/502	մալուխ		պղնձե մալուխ ВВГ, երկակի իզոլացված, 3*6 քառ. մմ
40	44322530/501	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 185 քառ. մմ
41	44322530/502	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 185 քառ. մմ

42	44322530/503	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 150 քառ. մմ
43	44322530/504	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 150 քառ. մմ
44	44322530/505	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 120 քառ. մմ
45	44322530/506	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 120 քառ. մմ
46	44322530/507	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 90 քառ. մմ
47	44322530/508	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 90 քառ. մմ
48	44322530/509	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 50 քառ. մմ
49	44322530/510	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 50 քառ. մմ
50	44322530/511	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 35 քառ. մմ
51	44322530/512	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 35 քառ. մմ
52	44322530/513	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 25 քառ. մմ
53	44322530/514	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 25 քառ. մմ
54	44322530/515	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 16 քառ. մմ
55	44322530/516	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 16 քառ. մմ
56	44322530/517	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 6 քառ. մմ
57	44322530/518	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 6 քառ. մմ
58	44322530/519	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 4 քառ. մմ
59	44322530/520	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 4 քառ. մմ

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շր ջա նա կի ընդ լայ նում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-3 մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Ինչպես արդեն նշել ենք, «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի կարիքների համար՝ շինանյութի և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/110 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

«ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/110» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 11-22, 40-59 ափաբաժիններով նախատեսված ապրանքների համար սահմանվել են հետևյալ պահանջները.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը
11	31321251/522	հաղորդալար		հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 2x6 քառ. մմ, զույգից մեկը պետք է գծանշված լինի կարմիր գույնով
12	31321251/523	հաղորդալար		հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 2x4 քառ. մմ, զույգից մեկը պետք է գծանշված լինի կարմիր գույնով
13	31321251/524	հաղորդալար		հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 2x2,5 քառ. մմ, զույգից մեկը պետք է գծանշված լինի կարմիր գույնով
14	31321251/525	հաղորդալար		հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 2x1,5 քառ. մմ, զույգից մեկը պետք է գծանշված լինի կարմիր գույնով
15	31321251/526	հաղորդալար		հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 1x6 քառ. մմ, դեղին-կանաչ գծանշումով
16	31321251/527	հաղորդալար		հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 1x4 քառ. մմ, դեղին-կանաչ գծանշումով
17	31321251/529	հաղորդալար		հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 1x1,5 քառ. մմ, դեղին-կանաչ գծանշումով
18	31321251/530	հաղորդալար		հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 1x2,5 քառ. մմ, դեղին-կանաչ գծանշումով
19	31331192/502	մալուխ		պղնձե մալուխ ВВГ, երկակի իզոլացված, հակակոռոզիոն փոշով լցված, 5*16 քառ. մմ
20	31331192/503	մալուխ		պղնձե մալուխ ВВГ, երկակի իզոլացված, հակակոռոզիոն փոշով լցված, 5*10 քառ. մմ
21	31331194/501	մալուխ		պղնձե մալուխ ВВГ, երկակի իզոլացված, 5*6 քառ. մմ
22	31331194/502	մալուխ		պղնձե մալուխ ВВГ, երկակի իզոլացված, 3*6 քառ. մմ
40	44322530/501	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 185 քառ. մմ
41	44322530/502	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 185 քառ. մմ
42	44322530/503	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 150 քառ. մմ
43	44322530/504	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 150 քառ. մմ
44	44322530/505	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 120 քառ. մմ
45	44322530/506	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 120 քառ. մմ
46	44322530/507	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 90 քառ. մմ
47	44322530/508	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 90 քառ. մմ
48	44322530/509	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 50 քառ. մմ
49	44322530/510	մալուխների		մալուխի այլումինե ծայրակալ, 50 քառ. մմ

		ծայրակալ		
50	44322530/511	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 35 քառ. մմ
51	44322530/512	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 35 քառ. մմ
52	44322530/513	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 25 քառ. մմ
53	44322530/514	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 25 քառ. մմ
54	44322530/515	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 16 քառ. մմ
55	44322530/516	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 16 քառ. մմ
56	44322530/517	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 6 քառ. մմ
57	44322530/518	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 6 քառ. մմ
58	44322530/519	մալուխների ծայրակալ		մալուխի պղնձյան ծայրակալ, 4 քառ. մմ
59	44322530/520	մալուխների ծայրակալ		մալուխի այլումինե ծայրակալ, 4 քառ. մմ

Ուսումնասիրելով վերոհիշյալ չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական-բնութագիրը, պարզ է դառնում, որ տեխնիկական պարապետրերը կազմելիս՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ամբողջությամբ և հստակ չի նկարագրել ձեռք բերվող ապրանքը, դրանք չեն ներառում գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների ամբողջական և համարժեք նկարագրությունը, իսկ դրանց նկարագրված հատկանիշները, ըստ էության, չեն ներառում ապրանքի ստանդարտին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների վրա: Մասնավորապես.

1. ՊՊՎԳ մակնիշով բազմաջիղ պղնձե հաղորդալարը չի հանդիսանում միակը, որը անփոխարինելի է ներքին էլեկտրահաղորդման ցանցի մոնտաժման համար: Առկա են հետևայլ համարժեքները ՊՎՀ, ՐԿԳՄ, ՇՎՎՊ, ՊՎ. Ուստի անհրաժեշտ է նշել համարժեք բառը, ինչը տվյալ դեպքում բացակայում է: Բացի այդ, անհրաժեշտ է նշել ГОСТ և ТУ, որպեսզի հստակեցվի, տվյալ ապրանքին ներկայացվող բոլոր պահանջները:

2. ՎՎԳ մակնիշի մալուխները չեն պատրաստվում հակակոռոզիոն փոշով լցված: Անհրաժեշտ է նշլել ГОСТ և ТУ, որպեսզի հստակեցվի տվյալ ապրանքին ներկայացվող պահանջները:

3. Մալուխի ծայրակալներների ընտրության համար միայն չափսը՝ քառ. մմ-ով բավարար չէ: Առկա են հետևյալ տեսակբերը՝ луженные, нелуженные, անկյունային (900, 450), луженные под пайку, луженные под опрессовку. Անհրաժեշտ է նշլել ГОСТ, որպեսզի հստակեցվի, տվյալ ապրանքին ներկայացվող պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է Օրենքի 13-րդ հոդվածով ապրանքի տեխնիկական բնութագրին ներկայացվող պահանջները, ինչն իր հերթին հանգեցրել է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվելի պահանջների խախտմանը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/110» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում՝ 11-22, 40-59 չափաբաժինների մասով Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.10.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել վերը շարադրված բողոքը:

2. <u>«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 25.10.2021թ թիվ 01/10-816 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/110» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) կողմից պահպանվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության բոլոր պահանջները:

Պատվիրատուի կողմից գնման առարկաների տեխնիկական բնութագրերը սահմանվել է, ելնելով գնման պահանջից, ուստի հաղորդալարերի ձեռքբերման նպատակով սահմանվել է ՊՊՎԳ, քանի որ ելնելով հիվանդանոցային կամինակացիոն ուղիների և հանքահորերի վիճակից, կառույցին անհրաժեշտ են նշված տեսակի հաղորդալարեր:

Մալուխների տեխնիկական բնութագիրը սահմանվելիս ГОСТ և ТУ չի սահմանվել, քանի որ ցանկացած ВВГ մակնիշի մալուխ, որը համապատասխանում է մալուխների համար սահմանված ГОСТ-ին ընդունելի է Պատվիրատուի կողմից:

Մալուխի ծայրակալների համար սահմանվել է միայն, քառ. Մ, քանի որ Պատվիրատուն պատրաստ է ընդունելու ցանկացած տեսակի ծայրակալ, որը նախատեսված է կցելու հրավերում նշված տվյալ մակերեսով մալուխին:

Ընկերության այն պնդումը, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը, այն է Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, չի համապատասխանում իրականությանը: Ուստի, Ընկերության կողմից ներկայացված բողոքը անհիմն է և առարկայազուրկ»:

Այնուհետև՝ 29.10.2021թ., թիվ 01/10-836 գրությամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

««Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ «ՈւԱԿ- ԳՀԱՊՁԲ-21/110» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) կողմից պահպանվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության բոլոր պահանջները:

1. Պատվիրատուի կողմից գնման առարկայի տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ ելնելով գնման պահանջից, որն իր հերթին ձևավորվել է հիվանդանոցային կամունիկացիոն ուղիների և մի շարք այլ նեղ մասնագիտական ուսումնասիրությունների արդյունքում: ՊՊՎԳ մակնիշով բազմաջիղ պղնձե հաղորդալարը ունի բազմաթիվ արտադրողներ, ուստի հավասար պայմաններ են ապահովվել հնարավոր մասնակիցների համար: Քանի որ չի օգտագործվել որևէ հղում, անհրաժեշտություն չկա նշելու «կամ համարժեք» բառակապակցությունը, ինչը հստակ սահմանված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով: Հաղորդալարերի ձեռքբերման նպատակով սահմանվել է ՊՊՎԳ,

քանի որ կառույցին անհրաժեշտ են նշված տեսակի հաղորդալարեր և ոչ թե այլ համարժեք մակնիշի:

2. Քանի որ մալուխներին վերաբերող բազմաթիվ գործող ԳՈՍՏ-եր կան (ԳՈՍՏ 31996-2012, ԳՈՍՏ 22483-2012, ԳՈՍՏ 23286-78, ԳՈՍՏ 7006-72, ԳՈՍՏ 31565-2012, ԳՈՍՏ 15150-69), Պատվիրատուն հարկ չի համարել բոլորը նշելու և պատրաստ է ընդունելու ցանկացած ՎՎԳ մակնիշի մալուխ, որը համապատասխանում է գործող ԳՈՍՏ-երին և որի չափսերը համապատասխանում են գնման առարկայի բնութագրերում նշված չափսերին:

3. Մալուխի ծայրակալների համար սահմանվել է միայն քառ.մ չափսը, քանի որ Պատվիրատուն պատրաստ է ընդունելու ցանկացած տեսակի ծայրակալ, որը նախատեսված է կցելու հրավերում նշված տվյալ մակերեսով մալուխին:

Ընկերության այն պնդումը, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը, այն է գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, չի համապատասխանում իրականությանը, քանի որ մասնակցի կողմից բողոքարկված չափաբաժիններին մասնակցության հայտ են ներկայացրել առնվազն 5 մասնակիցներ: Ուստի, Ընկերության կողմից ներկայացված բողոքն անհիմն է և առարկայազուրկ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.10.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/78 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/78 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար շինանյութի և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/110» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ով սահմանվել են 11-22-րդ և 40-59-րդ չափաբաժինների մասով տեխնիկական բնութագրեր:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի կողմից 19.10.2021թ. ներկայացված բողոքը, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 25.10.2021թ. և 29.10.2021թ. ներկայացված գրություններով հայտնած դիրքորոշումը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա. գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման

և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ

օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Այսպես, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար շինանյութի և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/110» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի շրջանակներում «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի կողմից 19.10.2021թ. ներկայացված բողոքով վիճարկվել են 11-22-րդ և 40-59-րդ չափաբաժիններով նախատեսված գնման առարկաների համար սահմանված տեխնիկական բնութագրերը:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական-բնութագրով, 11-22-րդ և 40-59-րդ չափաբաժիններով նախատեսված գնման առարկաների համար սահմանվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

Ապրանքի		
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանումը	Տեխնիկական բնութագիրը
11	հաղորդալար	հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 2x6 քառ.մմ, զույգից մեկը պետք է գծանշված լինի կարմիր գույնով
12	հաղորդալար	հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 2x4 քառ.մմ, զույգից մեկը պետք է գծանշված լինի կարմիր գույնով
13	հաղորդալար	հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 2x2,5 քառ.մմ, զույգից մեկը պետք է գծանշված լինի կարմիր գույնով
14	հաղորդալար	հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 2x1,5 քառ.մմ, զույգից մեկը պետք է գծանշված լինի կարմիր գույնով
15	հաղորդալար	հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 1x6 քառ.մմ, դեղին-կանաչ գծանշումով
16	հաղորդալար	հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 1x4 քառ.մմ, դեղին-կանաչ գծանշումով
17	հաղորդալար	հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 1x1,5 քառ.մմ, դեղին-կանաչ գծանշումով
18	հաղորդալար	հաղորդալար պղնձե, բազմաջիղ (многожил) ППВГ- 1x2,5 քառ.մմ, դեղին-կանաչ գծանշումով
19	մալուխ	պղնձե մալուխ ВВГ, երկակի իզոլացված, հակակոռոզիոն փոշով լցված, 5*16 քառ.մմ
20	մալուխ	պղնձե մալուխ ВВГ, երկակի իզոլացված, հակակոռոզիոն փոշով լցված, 5*10 քառ. մմ
21	մալուխ	պղնձե մալուխ ВВГ, երկակի իզոլացված, 5*6 քառ.մմ

22	մալուխ	պղնձե մալուխ ВВГ, երկակի իզոլացված, 3*6 քառ.մմ
40	մալուխների ծայրակալ	մալուխի պղնձյան ծայրակալ, 185 քառ.մմ
41	մալուխների ծայրակալ	մալուխի այլումինե ծայրակալ, 185 քառ.մմ
42	մալուխների ծայրակալ	մալուխի պղնձյան ծայրակալ, 150 քառ.մմ
43	մալուխների ծայրակալ	մալուխի այլումինե ծայրակալ, 150 քառ.մմ
44	մալուխների ծայրակալ	մալուխի պղնձյան ծայրակալ, 120 քառ.մմ
45	մալուխների ծայրակալ	մալուխի այլումինե ծայրակալ, 120 քառ.մմ
46	մալուխների ծայրակալ	մալուխի պղնձյան ծայրակալ, 90 քառ.մմ
47	մալուխների ծայրակալ	մալուխի այլումինե ծայրակալ, 90 քառ.մմ
48	մալուխների ծայրակալ	մալուխի պղնձյան ծայրակալ, 50 քառ.մմ
49	մալուխների ծայրակալ	մալուխի այլումինե ծայրակալ, 50 քառ.մմ
50	մալուխների ծայրակալ	մալուխի պղնձյան ծայրակալ, 35 քառ.մմ
51	մալուխների ծայրակալ	մալուխի այլումինե ծայրակալ, 35 քառ.մմ
52	մալուխների ծայրակալ	մալուխի պղնձյան ծայրակալ, 25 քառ.մմ
53	մալուխների ծայրակալ	մալուխի այլումինե ծայրակալ, 25 քառ.մմ
54	մալուխների ծայրակալ	մալուխի պղնձյան ծայրակալ, 16 քառ.մմ
55	մալուխների ծայրակալ	մալուխի այլումինե ծայրակալ, 16 քառ.մմ
56	մալուխների ծայրակալ	մալուխի պղնձյան ծայրակալ, 6 քառ.մմ
57	մալուխների ծայրակալ	մալուխի այլումինե ծայրակալ, 6 քառ.մմ
58	մալուխների ծայրակալ	մալուխի պղնձյան ծայրակալ, 4 քառ.մմ
59	մալուխների ծայրակալ	մալուխի այլումինե ծայրակալ, 4 քառ.մմ

Պատվիրատուի կողմից 22.10.2021թ. ներկայացվել է միջնորդություն հետևյալ բովանդակությամբ.

««Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ շինանյութի և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/110 ծածկագրով գնման ընթացակարգի գնման առարկաներն անհրաժեշտ է ձեռք բերել հնարավորինս սեղմ ժամկետում, ուստի հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանի 23-րդ կետը, «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի կողմից 21.10.2021թ. ներկայացված բողոքի քննությունը վարելու նպատակով խնդրում եմ գնման ընթացակարգը կասեցնել միայն 11-22, 40-59-րդ չափաբաժինների մասով և թույլատրել շարունակել մնացած չափաբաժինների մասով»:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 27.10.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի ընթացքում վերը շարադրված միջնորդությունը բավարարվել է, հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ «Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի կողմից բողոքով վիճարկվել է «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/110» ծածագրով ընթացակարգի 11-22-րդ, 40-59-րդ չափաբաժիններով նախատեսված գնման առարկաների համար սահմանված տեխնիկական բնութագրերի իրավաչափության հարցը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 23-րդ կետը, որոշում է կայացվել, բացառությամբ Ընթացակարգի 11-22-րդ, 40-59-րդ չափաբաժինների, գնման գործընթացի կասեցումը հանելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագրով, 11-18-րդ չափաբաժիններով նախատեսված գնման առարկաների՝ հաղորդալարերի համար տեխնիկական բնութագրեր սահմանելիս նշվել են ՊՊՎՀ, ինչն իրենից ներկայացնում է բազմաջիղ հաղորդալարի տեսակ, որպիսի պայմաններում գտնում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից նշված չափաբաժինների մասով տեխնիկական բնութագիր սահմանելիս չեն խախտվել գնման առարկայի բնութագրին ներկայացվող Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Ընկերությունը բողոքով ներկայացրել է հետևյալ փաստարկները.

«ՎՎՀ մակնիշի մալուխները չեն պատրաստվում հակակոռոզիոն փոշով լցված: Անհրաժեշտ է նշել ГОСТ և ТУ, որպեսզի հստակեցվի տվյալ ապրանքին ներկայացվող պահանջները: Մալուխի ծայրակալներների ընտրության համար միայն չափը՝ քառ. մմ-ով բավարար չէ: Առկա են հետևյալ տեսակները՝ луженные, нелуженные, անկյունային (900, 450), луженные под пайку, луженные под опрессовку. Անհրաժեշտ է նշել ГОСТ, որպեսզի հստակեցվի, տվյալ ապրանքին ներկայացվող պահանջները»:

Ինչ վերաբերում է ՎՎՀ մակնիշի մալուխների և մալուխի ծայրակալների համար տեխնիկական բնութագիր սահմանելիս Պատվիրատուի կողմից ГОСТ, ТУ և տեսակ չնշելուն, հարկ եմ համարում հայտնել, որ Պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 29.10.2021թ. 01/10-836 գրությամբ հայտնել է հետևյալը.

«(...) Քանի որ մալուխներին վերաբերող բազմաթիվ գործող ԳՈՍՏ-եր կան (ԳՈՍՏ 31996-2012, ԳՈՍՏ 22483-2012, ԳՈՍՏ 23286-78, ԳՈՍՏ 7006-72, ԳՈՍՏ 31565-2012, ԳՈՍՏ

15150-69), ***<u>Պատվիրատուն հարկ չի համարել բոլորը նշելու և պատրաստ է ընդունելու ցանկացած ԲԲՀ մակնիշի մալուխ</u>***, որը համապատասխանում է գործող ԳՈՍՏ-երին և որի չափերը համապատասխանում են գնման առարկայի բնութագրերում նշված չափերին:

<u>Մալուխի ծայրակալների համար սահմանվել է միայն քառ.մ չափը, քանի որ Պատվիրատուն պատրաստ է ընդունելու ցանկացած տեսակի ծայրակալ</u>, որը նախատեսված է կցելու հրավերում նշված տվյալ մակերեսով մալուխին: (...)»:

Նման պայմաններում գտնում եմ, որ բողոքն այս մասով՝ 11-18-րդ, 21-22-րդ և 40-59-րդ չափաբաժինների մասով, անհիմն է և ենթակա է մերժման:

Միևնույն ժամանակ, հարկ եմ համարում հայտնել, որ տվյալ դեպքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն օժտված չէ այնպիսի լիազորությամբ, որը թույլ կտար վերջինիս տալ գնահատական՝ արդյո՞ք Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերում ներառված գնման առարկան և դրա համար սահմանված տեխնիկական պահանջները համապատասխանում են Պատվիրատուի կարիքին, թե՞ ոչ:

Ինչպես արդեն արձանագրվեց սույն որոշմամբ, Ընկերությունը բողոքով հայտնել է նաև, որ ԲԲՀ մակնիշի մալուխները չեն պատրաստվում հակակոռոզիոն փոշով լցված:

Այս մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Պատվիրատուին 21.10.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/17290-2021 գրությամբ ներկայացվել են բողոքը և բողոքով ներկայացված փաստաթղթերը:

Պատվիրատուն 22.10.2021թ. թիվ 01/10-813 գրությամբ ներկայացրել է միջնորդություն, 25.10.2021թ. թիվ 01/10-816 և 29.10.2021թ. թիվ 01/10-836 գրություններով հայտնել է դիրքորոշում ներկայացված բողոքի վերաբերյալ, որոնք Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից մասամբ ընդունելի և հիմնավոր են համարվել, սակայն Պատվիրատուն որևէ կերպ չի անդրադարձել 19-րդ և 20-րդ չափաբաժիններով նախատեսված գնման առարկայի՝ մալուխի համար տեխնիկական բնութագիր սահմանելիս «հակակոռոզիոն փոշով լցված» պահանջ նախատեսելուն և չի հիմնավորել վերը նշված գնման առարկայի՝ մալուխի տվյալ տեխնիկական բնութագրով՝ հակակոռոզիոն փոշով լցված, գոյություն ունենալու փաստը, ուստի՝ այս մասով գտնում եմ, որ բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Գնումների աջակցման կենտրոն» ՍՊԸ-ի կողմից 19.10.2021թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Պարտավորեցնել «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/110» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասով Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

2. Բողոքի պահանջը մնացած մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**